Կազմված է 24.01.2014 թ. և բաղկացած է 15 թերթից

Տպագրված է ընդամենը 4 օրինակ

ՕՐԻՆԱԿ 2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության

առողջապահության նախարարի

24.01.2014 թվականի 100-Ա

հրամանով

Հայաստանի Հանրապետության

առողջապահության նախարար՝

Դ. Դումանյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ
"17" 02 2014 թ.

գրանցման թիվ 222.210.799997

վկայական 03U949997

հարկ վճարողի հաշվառման համար՝

02625503

Պետական ռեգիստրի ղեկավար՝

Ա. Գևորգյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ք. Երևան - 2014

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Պետական կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Արագածոտնի մարզային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 16.210.00856), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Արարատի մարզային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 14.210.01129), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Արմավիրի մարզային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 38.210.01420), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Գեղարքունիքի մարզային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 76.210.00680), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Լոռու տարածքային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 26.210.02108), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Կոտայքի մարզային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 11.210.02006), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Շիրակի մարզային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 29.210.01906), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային

տեսչության Սյունիքի մարզային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 27.210.01105), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Վայոց ձորի մարզային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 44.210.00343), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Տավուշի մարզային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 67.210.00736), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Երևանի Կենտրոնի և Նորք-Մարաշի տարածքային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 286.210.04796), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Մալաթիա-Սեբաստիայի տարածքային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 222.210.00336), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Աջափնյակ-Դավթաշենի տարածքային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 222.210.00337), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Էրեբունի-Նուբարաշենի տարածքային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 222.210.00335), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Արաբկիրի տարածքային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 222.210.00334), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Երևանի Շենգավիթի տարածքային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 269.210.02649), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Հայկական երկաթուղու փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 278.210.03546) և «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Մեծամորի փորձագիտական կենտրոն»

(պետական գրանցման համարը՝ 222.210.01081), «Հատուկ վտանգավոր վարակների կանխարգելման կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 273.210.03434), «Ներհիվանդանոցային ինֆեկցիաների կանխարգելման գիտագործնական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 278.210.53255) պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով վերակազմակերպելու միջոցով և հանդիսանում է վերջիններիս իրավահաջորդը, որին էլ փոխանցվում են բոլոր իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտերին համապատասխան:

2. Պետական կազմակերպությունը ստեղծված է համարվում նրա՝ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

3. Պետական կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

4. Պետական կազմակերպության կառավարման լիազոր մարմինն է հանդիսանում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ Լիազոր մարմին), որն ունի Պետական կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:

5. Պետական կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամաններով, սույն կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով:

6. Պետական կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, բանկային հաշիվ: Պետական կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ, որպես հայցվոր կամ պատասխանող:

7. Պետական կազմակերպությունն այլ կազմակերպությունների հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

8. Պետական կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել տեղական և միջազգային առողջապահական կազմակերպությունների և այլ հաստատությունների հետ:

9. Պետական կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և իր անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

10. Պետական կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով:

11. Պետական կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն

հայերեն կրճատ՝ «ՀՎԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

ռուսերեն լրիվ՝ «Национальный Центр по контролю и профилактике заболеваний» Государственная некоммерческая организация

ռուսերեն կրճատ՝ «Национальный центр КПЗ» ГНО

անգլերեն լրիվ՝ «National Center of Disease Control and Prevention» State Noncommercial Organization

անգլերեն կրճատ՝ «National CDC» SNCO

12. Պետական կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0025, Մխիթար Հերացի 12:

II. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

13. Պետական կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության բնագավառում՝

1) վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացում.

2) վարակիչ և ոչ վարակիչ զանգվածային հիվանդությունների, թունավորումների կանխարգելման նպատակով սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների անցկացում.

3) բնակչության զանգվածային անընկալության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացում, Իմունականխարգելման ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացում և համակարգում՝ իր իրավասությունների շրջանակում.

4) վարակիչ և մակաբուծային հիվանդությունների օջախներում, որտեղ առկա են վարակիչ ու մակաբուծային հիվանդությունների առաջացման և տարածման համար պայմաններ, ախտահանման, միջատազերծման և կրծողների ոչնչացման (դերատիզացիա) կատարում.

5) պետական սահմանի անցման կետերում սանիտարակարանտինային կետերի կողմից իրականացվող աշխատանքներին մասնակցություն՝ կանխարգելիչ, բժշկական միջոցառումներին օժանդակության մասով.

6) մարդու օրգանիզմի վրա ակուստիկ գործոնների ազդեցության նվազեցմանը նպաստող միջոցառումների կազմակերպում և իրականացում.

7) համաճարակների, բռնկումների, թունավորումների և հանրային առողջության անվտանգությանն սպառնացող այլ իրավիճակներին պատրաստվածության և արձագանքման (ներառյալ պահուստային պաշարների ապահովում, արագ արձագանքման թիմի ձևավորում և պատրաստվածություն, տրանսպորտի և այլ նյութական ռեսուրսների ապահովում, վարժանքների նախապատրաստում) ապահովում.

8) բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում մասնագիտական դիտարկումների, իրավիճակային վերլուծության և գնահատման իրականացում.

9) վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների տարածվածության, համաճարակաբանության և ռիսկի գործոնների դիտարկումների, վերլուծությունների, ուսումնասիրությունների իրականացում, ռիսկի խմբերի բացահայտում.

10) ներհիվանդանոցային ինֆեկցիաների հայտնաբերման և կանխարգելմանն ուղղված ծրագրերի իրականացում.

11) աշխատանքի հիգիենայի ապահովման և աշխատողների առողջության պահպանման ուղղված միջոցառումների նկատմամբ դիտարկումների, վերլուծությունների, ուսումնասիրությունների իրականացում.

12) համընդհանուր լաբորատոր ցանցի գործունեության համակարգում՝ Միջազգային առողջապահական կանոնների պահանջներին համապատասխան, և իր իրավասության սահմաններում ռեֆերենս լաբորատորիայի գործառույթների իրականացում.

13) սանիտարահիգիենիկ փորձաքննության, շրջակա միջավայրի գործոնների լաբորատոր հետազոտությունների իրականացում և եզրակացությունների տրամադրում.

14) հանրային առողջապահության ոլորտում կենսաապահովության և կենսաանվտանգության ապահովմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների իրականացում՝ իր իրավասությունների շրջանակում.

15) բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության սոցիալ-հիգիենիկ զննումների (մոնիթորինգի) իրականացում, արդյունքների վերլուծություն ու գնահատում.

16) բժշկական ու հիգիենիկ և հակահամաճարակային անվտանգության ոլորտի գիտելիքների և առողջ ապրելակերպի մասին քարոզչության ու բնակչության առանձին խմբերի կրթմանն ուղղված ծրագրերի իրականացում.

17) ճանապարհորդներին կանխարգելիչ պատվաստումներ իրականացնելու և խորհրդատվություն տրամադրելու, ինչպես նաև տրամաչափարկման և ստուգաչափման աշխատանքների իրականացում.

18) ներհիվանդանոցային ինֆեկցիաների կանխարգելման, բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության, հանրային առողջապահության ոլորտի իրավական ակտերի, մեթոդական ուղեցույցների, ծրագրերի նախագծերի մշակմանը մասնակցություն.

19) ինֆեկցիոն հսկողության մեթոդների մշակում, ներհիվանդանոցային ինֆեկցիաների ճշգրիտ ախտորոշման չափանիշների արդիականացմանն ուղղված միջոցառումների իրականացում.

20) գիտական և գիտաբժշկական հետազոտությունների իրականացում:

14. Պետական կազմակերպությունը, որպես ձեռնարկատիրական գործունեության տեսակներ, իրականացնում է .

1) հանրային առողջության պահպանման ոլորտում փորձագիտական հետազոտությունների, ուսումնասիրությունների, լաբորատոր հետազոտությունների և գործիքային չափումների իրականացում.

2) սանիտարահիգիենիկ փորձաքննության, շրջակա միջավայրի գործոնների, արտադրանքի, առարկաների ու նյութերի լաբորատոր հետազոտությունների իրականացում և եզրակացությունների տրամադրում.

3) ախտահանման, միջատազերծման և կրծողների ոչնչացմանը (դերատիզացիա) ուղղված աշխատանքների կատարում.

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցումը (այդ թվում՝ բնակչության զանգվածային անընկալության ապահովման միջոցառումների (կանխարգելիչ պատվաստումներ) կատարում.

5) շրջակա միջավայրի և արտադրական ակուստիկ գործոնների (աղմուկ, վիբրացիա, ուլտրաձայն, ինֆրաձայն) կենսաբանական ազդեցության հետազոտում, ֆիզիոլոգիական և հիգիենիկ բնութագրում, մարդու օրգանիզմի վրա նրանց թույլատրելի սահմանային մակարդակների վերաբերյալ եզրակացությունների տրամադրում, կանխարգելիչ միջոցառումների մշակում և իրականացում՝ ինչպես բժշկակենսաբանական, այնպես էլ ինժեներատեխնիկական, շինարարական և ճարտարապետական ակուստիկայի եղանակներով.

6) հակաբիոտիկների և ախտահանիչ նյութերի նկատմամբ ախտածին մանրէների զգայունության որոշում.

7) մասնագիտական հրատարակչական գործունեության իրականացում.

8) հանրային առողջապահության ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գիտահետազոտական աշխատանքների իրականացում.

9) հակաբիոտիկների և բուժհաստատություններում կիրառվող և նոր ներդրվող ախտահանիչ նյութերի արդյունավետության ուսումնասիրությունների իրականացում.

10) բժշկական սարքավորումների և կենսաբանական խոռոչների (շնչափող, կոկորդ, աչքի իմպլանտ) ախտահանման արդյունավետ և անվտանգ մեթոդների մշակում.

11) հանրային առողջապահության ոլորտին վերաբերող սեմինարների, համաժողովների կազմակերպում:

15. Պետական կազմակերպությունը կարող է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

16. Պետական կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել անձամբ կամ այդ նպատակով, հիմնադրի որոշման հիման վրա, հանդիսանալ այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից:

III. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

17. Պետական կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, Լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը և գործադիր մարմինը (այսուհետ՝ տնօրեն):

18. Լիազոր մարմինը՝

1) իրականացնում է պետական կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և կրում պատասխանատվություն դրանք չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և իր կանոնադրությանը համապատասխան՝ ստեղծում է պետական կազմակերպության հիմնարկներ, մասնաճյուղեր և ներկայացուցչություններ.

3) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ձևավորում է նրա կառավարման մարմինները և վաղաժամկետ դադարեցնում դրանց լիազորությունները.

4) իրականացնում է վերահսկողություն պետական կազմակերպության գործունեության նկատմամբ.

5) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում պետական կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները.

6) լսում է պետական կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում դրա գործունեության արդյունքները.

7) իրականացնում է վերահսկողություն պետական կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

8) վերահսկողություն է իրականացնում պետական կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ.

9) օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս պետական կազմակերպության գույքի օտարման կամ վարձակալության հանձման համար.

10) հաստատում է պետական կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը, տարեկան հաշվեկշիռը, տարեկան ֆինանսական և այլ հաշվետվություններ.

11) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ.

19. Պետական կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է պետական կազմակերպության տնօրենը, ով պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է (նրա լիազորությունները դադարեցվում են) լիազոր մարմնի հրամանով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

20. Տնօրենը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է պետական կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այլ իրավական ակտերի, պետական կազմակերպության կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

21. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով պետական կազմակերպությանը և (կամ) պետությանը պատճառված գույքային վնասի համար:

Տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չի հանդիսանում պատճառված վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

22. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

23. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս պետական կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը, կնքում գործարքներ.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի, լիազոր մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է պետական կազմակերպության գույքը այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) տալիս է պետական կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում պետական կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

5) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

6) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

7) սահմանում է պետական կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը.

8) հաստատում է պետական կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները.

9) նշանակում է պետական կազմակերպության հիմնարկների, ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարներին, նրանց տալիս է համապատասխան լիազորագրեր.

10) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

11) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

IV. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

24. Պետական կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև պետական կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռքբերված գույքից:

25. Պետական կազմակերպության ֆինանսական միջոցները ձևավորվում են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից.

2) կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից.

3) Հայաստանի Հանրապետության և արտերկրի իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ պայմանագրային աշխատանքներից.

4) իրավաբանական և ֆիզիկական անձանց (այդ թվում՝ արտերկրի) կողմից կատարված ներդրումներից, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային մուծումներից, նվիրատվություններից, դրամաշնորհներից, ինչպես նաև կտակներից.

5) Պետական կազմակերպության գործունեության արդյունք համարվող մտավոր և ստեղծագործական աշխատանքի արդյունքներից.

6) կազմակերպության գույքից և գույքային իրավունքներից ստացված եկամուտներից.

7) օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

26. Պետական կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

27. Պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ պետական կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

28. Պետական կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է պետական կազմակերպությունը:

29. Պետական կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

30. Պետական կազմակերպության ֆինանսական գործունեությունը ենթակա է ֆինանսական վերստուգման (աուդիտի)՝ լիազոր մարմնի կողմից ընտրված անկախ աուդիտորական կազմակերպության կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված վերահսկողության այլ ստորաբաժանման կողմից:

31. Պետական կազմակերպությունն իր գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործում է ինքնուրույն՝ հիմնադրի կողմից սահմանված կարգով, իր առջև դրված նպատակների իրականացման համար:

32. Հիմնադիրը կարող է պետական կազմակերպությանը անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք: Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից պետական կազմակերպությանն ամրացված գույքը:

33. Պետական կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու կամ հանձնելու անհատույց օգտագործման:

34. Պետական կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքն օրենսդրությամբ սահմանված կարգով պետության անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

35. Ամրացված գույքի օգտագործման արդյունքում ստացված եկամուտները և ամրացված գույքի վարձակալությունից գոյացած վճարները պետական կազմակերպության սեփականությունն են:

36. Պետական կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման կամ վարձակալության հանձնելու ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

37. Հիմնադրի կողմից պետական կազմակերպությանը գույքն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

38. Հիմնադրի կողմից պետական կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի և (կամ) պարտադիր պետական գրանցման ենթակա գույքի նկատմամբ պետական կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

V. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

39. Պետական կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Պետական կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել 100 տոկոս պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի, ինչպես նաև համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

40. Պետական կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

41. Պետական կազմակերպության լուծարմամբ գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

42. Պետական կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Պետական կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով: Պետական կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

43. Պետական կազմակերպության լուծարման դեպքում պետական կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է պետական բյուջե:

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԱՑԻԱՅԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
ГОСУДАРСТВЕННОГО РЕГИСТРА
STATE REGISTER AGENCY OF

Կազմված է 24.02.2014 թ. և
բաղկացած է 1 թերթից
Տպագրված է ընդամենը 3 օրինակ
Օրինակ 3

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
«24» փետրվարի 2014թ.
N 336-Ա հրամանով

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ
17.02.2014 թ.

գրանցման թիվ 222.210.799997
վկայական 03Ա 949997
հարկ վճարողի հաշվառման համար՝
02625503
17.02.2014թ. գրանցված
կանոնադրության թիվ 0043
փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
27 02 2014 թ.

«ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

1. «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 17 կետում «գործադիր մարմինը» բառերը փոխարինել «Գլխավոր տնօրենը» բառերով:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության (գրանցված 17.02.2014թ.) բաղկացուցիչ մասը:

Կազմված է 06.06.2014 թ. և բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ

ՕՐԻՆԱԿ 2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
10.06.2014 թ. թիվ 1337-Ա
հրամանով

Առողջապահության նախարար՝

_____ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 17.02.2014 թ.,
գրանցման թիվ 222.210.799997
վկայական 03 Ա 949997
հարկ վճարողի հաշվառման համար՝
02625503

17.02.2014 թ. գրանցված
կանոնադրության
թիվ 002.3 փոփոխությունը գրանցված
է իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից "20" 06 2014 թ.

Պետական ռեգիստրի ղեկավար՝

_____ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն»

պետական ոչ առևտրային կազմակերպության

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(փոփոխություն)

«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ լրացումը.

Կանոնադրության 1-ին գլխի 1-ին կետից հետո ավելացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Պետական կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թ. հոկտեմբերի 17-ի «Մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպություններ և փակ բաժնետիրական ընկերություններ վերակազմակերպելու ու «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» թիվ 1134-Ն որոշման համաձայն վերակազմակերպվել է՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 16.07.2001 թ., պետական գրանցման համարը՝ 282.120.04109, հարկ վճարողի հաշվառման համար՝ 00803072) և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակուստիկայի գիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 12.07.1994 թ., պետական գրանցման համարը՝ 269.140.00067, հարկ վճարողի հաշվառման համար՝ 02202304) նրան միացման ճանապարհով և հանդիսանում է նրանց իրավահաջորդը՝ փոխանցման ակտերին համապատասխան:»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 17.02.2014 թ. գրանցված կանոնադրության (փոփոխությունը գրանցվել է 27.02.2014 թ.) բաղկացուցիչ մասը:

Կազմված է 20.12.2017թ. և բաղկացած է
3 թերթից
Տպագրված է ընդամենը 3 օրինակ
Օրինակ 3

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
20 դեկտեմբերի 2017 թվականի
3630- Ա հրամանով
Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարար՝

_____ Է. Ալթունյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ
17.02.2014 թ.
գրանցման թիվ 222.210.799997
վկայական 03Ա949997
հարկ վճարողի հաշվառման համար՝
02625503
17.02.2014թ. գրանցված
կանոնադրության թիվ 003.3
փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից

22.12.2017 թ

«ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(փոփոխություն)

1. «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ լրացումները.

1.1. Կանոնադրության 1-ին գլխի 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Պետական կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 7-ի «Ա. Բ. Ալեքսանյանի անվան համաճարակաբանության, վիրուսաբանության և բժշկական մակաբուծաբանության գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը միացման ձևով վերակազմակերպելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 1134-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 1088-Ն որոշման համաձայն վերակազմակերպվել է՝ «Ա. Բ. Ալեքսանյանի անվան համաճարակաբանության, վիրուսաբանության և բժշկական մակաբուծաբանության գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 12.12.2002թ., պետական գրանցման համարը՝ 273.210.03350, հարկ վճարողի հաշվառման համար՝ 01504981) «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 17.02.2014թ., պետական գրանցման համարը՝ 222.210.799997, հարկ վճարողի հաշվառման համար՝ 02625503) միացման ճանապարհով և հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:»

1.2. Կանոնադրության 2-րդ գլխի 13-րդ կետի 20-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«20) գիտահետազոտական և կիրառական գիտաբժշկական հետազոտությունների իրականացում:»:

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության (գրանցված 17.02.2014թ.) բաղկացուցիչ մասը:

Տպագրված է ընդամենը 3 օրինակ

ՕՐԻՆԱԿ 3

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
02.12.2020 թ. թիվ 4249-Ա
հրամանով

Առողջապահության նախարար՝

X

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

_____Ա. Թորոսյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 11.12.2014 թ.,
գրանցման համար՝ 222.210.799997
ՀՎՀՀ՝ 02625503
11.12.2014թ. գրանցված
կանոնադրության թիվ ___
փոփոխությունը
գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից
11.12.2020 թ.

Աշխատակից՝

_____

«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն»

պետական ոչ առևտրային կազմակերպության

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(փոփոխություն)

«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 35-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«35. Պետական կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 17.02.2014 թվականին գրանցված կանոնադրության բաղկացուցիչ մասը:

Բաղդասարյան
24.09.19

Կազմված է 2024թ. և բաղկացած
3 թերթից Տպագրված է
ընդամենը 4 օրինակ
Օրինակ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
« 27 » հունիս 2024 թվականի
3545 - Ա հրամանով
Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարար՝

_____ Ա. Ավանեսյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
17.02.2014 թ.
գրանցման թիվ 222.210.799997
վկայական 03Ա949997
ՀՎՀՀ 02625503
17.02.2014թ. գրանցված
կանոնադրության թիվ 005.3
փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից

10. 07. 2024 թ.

«ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(փոփոխություն)

1. «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության՝

1) 18-րդ կետը լրացնել նոր՝ 12-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ՝

«12) հաստատում է Պետական կազմակերպության հաստիքացուցակը:».

2) 23-րդ կետից հետո լրացնել նոր՝ 23.1-ին և 23.2-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ.

«23.1. Պետական կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների արդյունավետ իրականացման համար գլխավոր տնօրենին կից կարող է ձևավորվել խորհրդակցական մարմին՝ խորհուրդ:

23.2. Խորհուրդը ձևավորվում է և խորհրդի կազմը, աշխատակարգը հաստատվում է գլխավոր տնօրենի հրամանով:»

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է «Հիվանդությունների վերահսկման և անխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անոնադրության (գրանցված 17.02.2014թ.) բաղկացուցիչ մասը: